ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*30 օգոստոսի 2018թվականի N 829*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.2018 թվականի սեպտեմբերի 3-ին հրավիրել Հրազդան համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 սեպտեմբերի 2018թվականի N 830*

*ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 28 /քսանութ/ անապահով բնակիչների դիմումները՝*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 468000 /չորս հարյուր վաթսունութ հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի թվով 28 /քսանութ/ անապահով բնակիչների:*
*2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*
*ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*04 սեպտեմբերի 2018թվականի N 831*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 26-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.[16]-րդ հոդվածի 2-րդ մասի, 219.1, 275-283-րդ, 305 հոդվածների, ուսումնասիրելով Հրազդան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերը, 2018 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 6-րդ արձանագրությունը և հաստատված համարելով անհատ ձեռնարկատեր Հենրիկ Գալստյանի կողմից առանց թույլտվության առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի օբյեկտը ժամը 24:00- ից հետո աշխատացնելու հանգամանքը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1. Անհատ ձեռնարկատեր Հենրիկ Մխիթարի Գալստյանին /ք. Հրազդան Միկրոշրջան թաղամաս 202 շենք 8 բնակարան/ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.[16]-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:*
*2. Որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Հենրիկ Գալստյանին:*
*3. Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ 900125001488 հաշվարկային հաշվին:*
*4. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:*
*5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*
*6. Սույն որոշումն անբողոքարկելի է դառնում այն ստանալու պահից 2 ամիս հետո:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*
*ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 սեպտեմբերի 2018թվականի N 832*

*ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գևորգ Սարգսյանի լիազոր անձ Զավեն Սարգսյանի 2018 թվականի սեպտեմբերի 03-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 1/1 տան բնակիչ Գևորգ Զավենի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2549879, տրված՝ 2008 թվականի հուլիսի 11-ին/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Երևանյան փողոց 1/11:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*
*ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*